# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մայիսյան
համայնք, ՀՀ Արմավիրի մարզ, գ.Մայիսյան, 1-ին փողոց, տուն 52,
Հեռ. (093) 490666 , mayisyan.armavir@mta.gov.am

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

N 183
*14 նոյեմբեր 2019թ.*

Արմավիրի մարզի Մայիսյանի համայնքապետարանը Ձեզ է ներկայացնում 2019 թվականի նոյեմբերի 8-ին կայացած համայնքի ավագանու թիվ 10 արտահերթ նիստի թվով 9 որոշումները

Առդիր՝ 17 թերթ

**Համայնքի ղեկավարի տեղակալ** **Վ. Հարությունյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ

## ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8 նոյեմբերի 2019 թ. — թիվ 10 արտահերթ նիստի
թիվ 60-Ա որոշում

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասով

Մայիսյան համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

կողմ (5) դեմ (0) ձեռնպահ (0)

1. Մ. Գինոսյան
2. Ս. Խարաեղյան
3. Հ. Հակոբյան
4. Ա.Հարությունյան
5. Խ. Մովսիսյան

ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ե. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2019 թ. նոյեմբերի 8 գ.Մայիսյան

Հավելված
Մայիսյան համայնքի ավագանու
2019 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 10
արտահերթ նիստի թիվ 60-Ա որոշման

# ՕՐԱԿԱՐԳ

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
Զեկ.՝ Ե. Մովսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
Զեկ.՝ Ե. Մովսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԵԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
Զեկ.՝ Ե. Մովսիսյան

ՌՈԲԵՐՏ ԱՄԻՐԽԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԻՑ 20% ԱՎԵԼԻ ՄԱՍԸ 64 ՔՄ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
Զեկ.՝ Ե. Մովսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ԳԵՆՊԼԱՆԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
Զեկ.՝ Ե. Մովսիսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ
Զեկ.՝ Ե. Մովսիսյան

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ
Զեկ.՝ Ե. Մովսիսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԵՍԱՅԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
Զեկ.՝ Ե. Մովսիսյան

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Ե. Մովսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մայիսյան համայնք, Էլ. Փոստ՝ mayisyan.armavir@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

8 նոյեմբերի 2019 թ.

թիվ 10 արտահերթ նիստի
թիվ 61-Ն որոշում

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետով:

Մայիսյան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Արմավիրի մարզի Մայիսյան գյուղական համայնքի վարչական տարածքում սահմանված 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

կողմ (5) դեմ(0) ձեռնպահ(0)

1. Մ.Գինոսյան
2. Ս. Իսրաելյան
3. Հ.Հակոբյան
4. Ա. Հարությունյան
5. Խ. Մովսիսյան

ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ե. ՄՈՎՍԻՍՅԱՆ

8 Նոյեմբերի 2019թ. գ.Մայիսյան

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-Ի
ԹԻՎ 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ԹԻՎ 61-Ն ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

1). հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

2) սույն կետի առաջին ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

ա) 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

բ) 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,

գ) 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,

դ) 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.

3). ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

բ ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

2. համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1). չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

2. )Բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինություններփ ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև մեկ հազար հինգ հարյուր դրամ,

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար հարյուր դրամ,

գ) 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ չորս հազար դրամ

դ) 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար դրամ

ե)200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝[illegible] հազար դրամ .

զ) 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար դրամ.

8. իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ,

դ. խաղատների համար՝ հինգ հարյուր հազար դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ հարյուր հազար դրամ.

10. համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

1). հիմնական շինությունների ներսում՝

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հարյուր դրամ,

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ,

գ) 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար հարյուր դրամ,

դ) 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ

[illegible] ).200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տաս հազար դրամ

զ) 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար դրամ.

2. ոչ հիմնական շինությունների ներսում՝

գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի առաջին ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3. համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

4. համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

5 համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երեսուն հազար դրամ.

6. համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

7 համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

1)ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար հարյուր դրամ

գ) 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ չորս հազար դրամ

դ) 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար դրամ

ե) 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ինը հազար դրամ,

զ) 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար դրամ

2). ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հարյուր դրամ,

□ ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հարյուր դրամ,

գ) 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար դրամ

□ ) 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝երկու հազար դրամ

□ ) 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամ

□ ) 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ինը հազար դրամ.

11. ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝հազար դրամ,

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ,

3) սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

4) այլ արտաքին գովազդի համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

5). դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով.

6). եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով..

12) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար դրամ,

13) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

8 նոյեմբերի 2019 թ.

թիվ 10 արտահերթ նիստի
թիվ 62-Ա որոշում

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԵԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետով

Մայիսյան համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել համայնքապետարանի և համայնքի ենթակայության հիմնարկների 2020 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ԱՎԱԳԱՆԻ ԱՆԴԱՄՆԵՐ

կողմ (5) դեմ (0) ձեռնպահ (0)

1. Մ. Գինոսյան
2. Ս. Իսրաելյան
3. Հ. Հակոբյան
4. Ա. Հարությունյան
5. Խ. Մովսիսյան

ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ե. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2019թ. նոյեմբերի 8 գ.Մայիսյան

ՀԱՎԵԼՎԱԾ
Մայիսյան համայնքի ավագանու
2019թվականի նոյեմբերի 8-ի թիվ 10
Արտահերթ նիստի թիվ 62-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՄԱՅԻՍՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

| | Հաստիքի անվանումը | Թվաքանակը | Պաշտոնական դրույքաչափերը |
|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 230.000 դրամ |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 125.000 դրամ |
| 3 | Աշխ. Քարտուղար/ծածկ.1.2-1/ | 1 | 130.000 դրամ |
| 4 | Առաջատար մասնագետ/ծածկ.3.1-1/ | 1 | 128.000 դրամ |
| 5 | 1-ին կարգի մասնագետ/ծածկ.3.2-1/ | 1 | 115.000 դրամ |
| 6 | 1-ին կարգի մասնագետ/ծածկ.3.2-2/ | 1 | 115.000 դրամ |
| 7 | 2-րդ կարգի մասնագետ/ծածկ.3.3-1/ | 1 | 100.000 դրամ |
| 8 | 2-րդ կարգի մասնագետ/ծածկ.3.3-2/ | 1 | 100.000 դրամ |
| 9 | Հավաքարար | 1 | 92.618 դրամ |
| 10 | Անասնաբույժ | 1 | 92.618 դրամ |

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ

| | Հաստիքի անվանումը | Թվաքանակը | Պաշտոնական դրույքաչափերը |
|---|---|---|---|
| 1 | Մշակույթի տան տնօրեն | 1 | 92.618 դրամ |
| 2 | Գրադարանավար | 1 | 92.618 դրամ |
| 3 | Այգեպան | 1 | 92.618 դրամ |
| 4 | Հավաքարար | 1 | 92.618 դրամ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ

8 նոյեմբերի 2019 թ.

թիվ 10 արտահերթ նիստի
թիվ 63-Ա որոշում

## ՌՈԲԵՐՏ ԱՄԻՐԽԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԻՑ 20% ԱՎԵԼԻ ՄԱՍԸ 64 ՔՄ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով , <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին կետի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով հաշվի առնելով այն հանգամանքը, որ հողամասը ընդգրկված նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում նկատի ունենալով նաև այն հանգամանքը , որ Ռոբերտ Ամիրխանյանը շուրջ 28 տարի փաստացի տիրապետում է այդ հողակտորը:

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մայիսյան համայնքի հողատեր Ռոբերտ Ամիրխանյանին 64 քմ համայնքային հողատարածքը՝ կադաստրածային ծածկագիր՝ / 04-043-430-001/ ուղղակի վաճառքի կարգով
2. Սահմանել հողամասի վաճառքի գինըկադաստրային արժեքի չափով, որը կազմում է 1 քմ-ի համար 592.5 /հինգ հարյուր իննսուներկու դրամ հիսուն լումա/ ՀՀ դրամ, ընդհանուր արժեքը 37920/ երեսունյոթ հազար ինը հարյուր քսան /ՀՀ դրամ
3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մայիսյան համայնքի ղեկավար՝ Եսայի Մովսիսյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

կողմ (5) դեմ (0) ձեռնպահ (0)

1. Մ. Գինոսյան
2. Ս. Իսրաելյան
3. Հ. Հակոբյան
4. Ա. Հարությունյան
5. Խ. Մովսիսյան

ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ե. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2019թ. նոյեմբերի 8 գ.Մայիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ԳԵՆՊԼԱՆԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

8 նոյեմբերի 2019 թ.

թիվ 10 արտահերթ նիստի
թիվ 64-Ա որոշում

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

Մայիսյան համայնքի ավագանին որոշում է

1. Տալ համաձայնեցում Արմավիրի մարզի Մայիսյան համայնքի հողային գենպլանը
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

կողմ (5) դեմ (0) ձեռնպահ (0)

1. Մ. Գինոսյան
2. Ս. Իսրաելյան
3. Հ. Հակոբյան
4. Ա. Հարությունյան
5. Խ. Մովսիսյան

ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Ե. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2019թ. 8 նոյեմբերի գ.Մայիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

8 նոյեմբերի 2019 թ.

թիվ 10 արտահերթ նիստի
թիվ 65-Ն որոշում

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 65-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մայիսյան համայնքի ղեկավարի առաջարկությունը և Ռուզաննա Ռաֆիկի Մկրտչյանի դիմումը

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է**

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մայիսյան համայնքի սեփականություն հանդիսացող 04-043-0485-0057 ծածկագրի տակ գտնվող 0.2 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր գործառնական նշանակության հողամասը ուղղակի վաճառքի կարգով 16.000 /տասնվեց հազար / ՀՀ դրամ արժեքով, որը հողամասի կադաստրային արժեքն է վաճառել Ռուզաննա Ռաֆիկի Մկրտչյանին:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մայիսյան համայնքի ղեկավար՝ Եսայի Մովսիսյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանն հաջորդող 10-րդ օրը:

կողմ (5) դեմ (0) ձեռնպահ (0)

1. Մ. Գինոսյան
2. Ս. Իսրաելյան
3. Հ. Հակոբյան
4. Ժ. Մովսիսյան
5. Խ. Մովսիսյան

ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ե. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2019թ. 8 նոյեմբերի գ.Մայիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

8 նոյեմբերի 2019 թ.

թիվ 10 արտահերթ նիստի
թիվ 66-Ն որոշում

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Մայիսյան համայնքի ավագանին որոշում է

1. Տալ համաձայնություն բաց աճուրդային եղանակով օտարելու համայնքային սեփականություն հանդիսացող հողատեսք ը համաձայն հավելվածի
2. Մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի 50 տոկոս
3. Նախավճարի և քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսին համարժեք դրամ, մասնակցության վճար 5000 /հինգ հազար/ դրամ
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆԻ ԱՆԴԱՄՆԵՐ

կողմ (5) դեմ (0) ձեռնպահ (0)

1. Մ. Գինոսյան
2. Ս. Իսրաելյան
3. Հ. Հակոբյան
4. Ա. Հարությունյան
5. Խ. Մովսիսյան

ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ե. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2019թ. նոյեմբերի 8 գ.Մայիսյան

ՀԱՎԵԼՎԱԾ
Մայիսյան համայնքի ավագանու
2019 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 10
Արտահերթ նիստի թիվ 66-Ն որոշման

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՕՏԱՐՎՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԸ

1. Լոտ 1 ծածկագիր 04-043-0485-0058 բնակավայրի նշանակության 0.0892 հա, հողատեսքը՝ հասարակական կառուցապատման
   մեկնարկային գինը՝ 854.000 /ութ հարյուր հիսունչորս հազար/ դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԵՍԱՅԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8. նոյեմբերի 2019 թ. թիվ 10 արտահերթ նիստի
թիվ 67-Ա որոշում

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Եսայի Մովսիսյանի իր պարտականությունների գերազանց կատարումը

Մայիսյան համայնքի ավագանին որոշում է

1. Մայիսյան համայնքի ղեկավար Եսայի Մովսիսյանին իր պարտականությունները բարեխղճորեն և գերազանց կատարելու համար պարգևատրել 150.000 /հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամի չափով
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ԱՎԱԳԱՆԻ ԱՆԴԱՄՆԵՐ

կողմ (5) դեմ (0) ձեռնպահ (0)

1. Մ. Գինոսյան
2. Ս. Իսրաելյան
3. Հ. Հակոբյան
4. Ա.Հարությունյան
5. Խ. Մովսիսյան

ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ե. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2019 թ. նոյեմբրի 8 գ.Մայիսյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ

8 նոյեմբերի 2019 թ.

թիվ 10 արտահերթ նիստի
թիվ 68-Ա որոշում

### ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Մայիսյան համայնքի ավագանին որոշում է

1. Դիմում ներկայացրած ընտանիքներին տալ դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

կողմ (5) դեմ (0) ձեռնպահ (0)

1. Մ. Գինոսյան
2. Ս. Իսրաելյան
3. Հ. Հակոբյան
4. Ա. Հարությունյան
5. Խ. Մովսիսյան

ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ե. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2019 թ. նոյեմբերի 8 գ.Մայիսյան

ՀԱՎԵԼՎԱԾ
Մայիսյան համայնքի ավագանու
2019 թվականի նոյեմբերի 8-ի թիվ
10 արտահերթ նիստի թիվ 68-Ա որոշման

# ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

1 Գևորգյան Լևոն Աղասու ---------------------30.000 /երեսուն հազար/ դրամ

2 Քննաքսզյան Եսմա ---------------------------30.000 /երեսուն հազար/ դրամ

3 Զատիկյնա Գառնիկ ---------------------------30.000 /երեսուն հազար/ դրամ